ՅՈՒՆԻԲԱՆԿ

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ**
**2017թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Հարգելի բաժնետերեր և հյուրեր,**

Թույլ տվեք ներկայացնել 2017թ. Ներքին Աուդիտի տարեկան հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին Աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ`

1. ***Գլխամասային գրասենյակ***

- Բանկի ներքին հսկողության համակարգի գնահատում` համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 4-ով սահմանված պահանջների:
- Գործառնական ռիսկերի կառավարման համակարգի գնահատում, գործունեության ստուգում, ներքին հսկողության համակարգի գնահատում:
- Քարտային հաշիվների գույքագրում, բացասական մնացորդով քարտային հաշիվների վերլուծություն/ուսումնասիրություն, առաջացման պատճառների բացահայտում:
- Անձնակազմի խրախուսման համակարգի ուսումնասիրություն, պարգևավճարների հաշվարկի և վճարման կարգի համապատասխանության ստուգում:
- Հեռացված, հետին ամսաթվով կատարված և փոփոխության ենթարկված գործարքների ուսումնասիրություն, համապատասխանության ստուգում:
- Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների/գործընթացների ստուգում:
- Ժամկետանց վարկերի ապահովվածության միջոց հանդիսացող գրավների ստուգում` տրամադրված 2014-2016թթ. ժամանակահատվածում:
- Ոսկու գրավով ապահոված վարկերի նպատակային ստուգում:
- Տնտեսական դեպարտամենտի գործունեության ստուգում, ինչպես նաև պահեստի գույքագրում:
- Մասնաճյուղերի գործունեության կրճատ և համալիր ստուգում:
- Մասնաճյուղերի դրամարկղային հանգույցի հանկարծակի ստուգում:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների կատարման վերաբերյալ հետստուգման աշխատանքների իրականացում:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների կատարման վերաբերյալ հետստուգման աշխատանքների իրականացում:
- Արտաքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների կատարման վերաբերյալ հետստուգման աշխատանքների իրականացում:

2. ***Տարածքային ստորաբաժանումներ***

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով ստուգվել են 24 մասնաճյուղ, որից թվով 12-ը ենթարկվել են համալիր ստուգման, իսկ թվով 12-ը կարճատև ստուգման (նպատակային, ըստ որևէ ոլորտի):

***Այժմ ներկայացնեմ Ներքին Աուդիտի կողմից տրված եզրակացությունը ներքին հսկողության համակարգի վերաբերյալ:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին Յունիբանկ ԲԲԸ Ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել`

Բանկի Ներքին աուդիտի 2017թ-ի տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,

Ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,

ՀՀ ԿԲ իրականացված համալիր վերստուգման արդյունքներով արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները, ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Արտաքին աուդիտի վերստուգման արդյունքների հիման վրա «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Յունիբանկ» ԲԲԸ ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

**«Յունիբանկ» ԲԲԸ Ներքին աուդիտի տնօրեն**
**Հայկ Սուվարյան**
**01.06.2017թ.**